237. ՀԻՆ ԳՈՐԻՍԻՑ արևելք, եկեղեցու մեջ թաղված սապանաքարի երեսին. 4 տ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼԻՔ ՈՒՍԻՑԻՆ
ՈՐԴԻ | ՄԵԼԻՔ ՈՒՌՈՒՍՏԱՄԻՆ. :1822:

ԱՅՍԷՏԱՊԱՆ ՄԵԼԻՔՈՒ
ՍԻՅՒՆ ՈՐԴԻ
ՄԵԼԻՔ ՌՌՌՍՄԱՒՆ
1822

ՑԱՑՋԻ

Գտնվում է այժմ Գորիսի շրջանի մեջ. ենթադրվում է, որ հնում Ծղուկ գավառի մեջ հիշատակված Հարժիք գյուղն է՝ 10 չափ հարկով։

Հարժիք գյուղը Ստ. Օրբելյանի օգտագործած փաստաթղթերի մեջ հիշատակված է 906 թ. առաջին անգամ, երբեմն Սմբատ Բագրատունու նվեր Տաթևի վանքին, հետագայում, ինչպես երևում է մի քանի անգամ օտարացվել է ու կրկին վանքին վերադարձվել. վերջին անգամ Տարոնլիճ Օրբելյանն է հաստատում գյուղը Տաթևին պատկանելու փաստը։

Ներկա Յայջի անունը Հարժիքի ձևափոխությունն է, ադրբեջաններենի ազդեցությամբ։

Գյուղի շրջակայքում կան երկու կարևոր հուշարձաններ.

1. «Կոտրած քարվանսարա». կիսավեր իշխանատուն. գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր հյուսիս, բաղկացած է մի քանի բաժանմունքներից. շինված է սրբատաշ քարերով, արևմտյան մուտքի ճակատին գտնվում է խիստ եղծված արձանագրություն, ուր պահպանվել է թվականը 1319 և Օրբելյանների անունները։

Այս հուշարձանը կարևոր է նրանով, որ իր տեղադրությամբ պարզում է Արարատյան դաշտից—Նախիջևանից դեպի Պարտավ ու Աղվանք տանող հին ճանապարհի հատվածների ուղղությունը։

Հնի նման ներկայումս էլ ճանապարհը Նախիջևան գնալ ափերով հասնում է Բիչանագի լեռնանցքը, ապա իջնելով՝ Որոտանի ափերով մտնում է Անգեղակոթ գյուղը և այնտեղից. Սիսիան գյուղին չհասած՝ թեքվում է դեպի հյուսիս և բաց դաշտերով ընթանալով, Ուչ Թափալարների հյուսիսից անցնում և մտնում է Գորիս։

Յայջիի քարվանսարայի գոյությունն ապացուցում է, որ հին ճանապարհը Անգեղակոթից հետո անցել է Սիսիան, Ագուդի, Ուսուտ և Յայջի գյուղերի միջով, Ուչ Թափալարների հարավից անցնելով՝ մտել է Գորիս։

Հին ճանապարհի վտանգավոր տեղամասերում՝ փոթորիկների և ձյունի ժամանակ չշեղվելու համար՝ ճանապարհի երկու կողքերին տնկել են ցից քարեր 1½—2 մետր բարձրությամբ. տրտպիսի ճանապարհաքարեր մնացել են ընկած և կանգուն վիճակում ինչպես «Կոտրած քարվանսարայի» մոտ, այնպես էլ այլ կետերում, մանավանդ Բիչանագի լեռնանցքի վրա և լեռնանցքի կատարին մնացած ժայռափոր, 3 մասերից բաղկացած հին քարվանսարայի մոտերքում։ Քարերի մի մասը վերին ծայրում ունի անցք, որն ապացույց է, որ քարշ տալու միջոցով են տեղափոխվել և հեռու տեղից։

2. «Քյուրդլար» գյուղատեղի. գտնվում է գյուղից դեպի հարավ-արևելք, Որոտանի ափի ցածրագիր հարթության վրա։ Այդտեղ կան մի կիսավեր եկեղեցի ու գավիթ. գավթի մեջ մի մեծ տապանաքար-արձանագրությամբ և դուրսը խաչքարեր։

Հավանաբար այս գյուղատեղին հին Հարժիքն է։

501—6

238. ՑԱՑՋԻ. «ԿՈՏՐԱԾ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻ» մուաքի ճակատին, եղծված արձանագրություն. 7 տ., ուր որոշ են միայն՝

ԻՌԱՀԶԿԸ
-ԻՍԱՐ ՈՂԷԻՎԱ--
ՋՕՐՈՌԷՆԱՅԻՅԻԾԱՄՌԻ
ՍԱՑԻԾԽԱՆՕՐՊԷԼԲԻԻԻԿՌԻ
ԲԷՇՔԵՍՑԵԻԱԻԲԼՍՍԼՍՅՆԻՒ՝
.... Շ-ՈՅԲԱԻՆԻԻԻՆ. ...
. . . . . .

Ի ԹՎ. :ՁԿԸ:
ԵՒ ԻՇԽԱՆ ՕՐՊԷԼ, ԲԼՇՔԵՆ

անունները։

Լուսանկ. տախտ. XXII, 92

239. ՑԱՑՋԻ. ՔՑՈՒՐԴԼԱՐ ԳՑՈՒՂԱՏԵՂԻ եկեղեցու մեջ, գերեզմանաքարի վրա.

ՁԳԵՂԵՑԿԱՏԻՊԵ ԱԾԻՆԴԵՌԱԲՈՅՍՄԱ Թ
ԻՁԾԱՂԿԱՓԹԻԹ ՆՂԻԿՆԱԼՆԿԻՍԱՐ-- Հ ՀԵ
ԱԼՁԱՐԱԿԱՆԱՁԱՏ ՓՈԽԵԱԼՅԱՇԽՄՀԷ
ԹՈՂԵԱԼՍՈՒԳԱՆՄԻԹՄԱՆՁԱՒԱԿԾՆՈՂԱՑՆ ՀԱՂԱՐԻՆԵԻՒ ԱՓԱՍԾՈՒՆԻՆՅ
ԻՆԵՑԷՔԻՔՍ

ՁԳԵՂԵՑԿԱՏԻՊ ԵԻ ՁԾԱՂԿԱՓԹԻԹ ՔԱՋ ՁԱԻՐԱԿԱՆ ԱՁԱՏԱԾԻՆ, ԴԵՌԱԲՈՅՍ ՄԱՆՈՒԿՆ ԱԼՆ ԿԻԼԱԻՐԵԱՂ | ՓՈԽԵԱԼ ՑԱՇԽԱՐՀԷ |, ԹՈՂԵԱԼ ՍՈՒԳ ԱՆՄԻԹԱՐ ԱՆՁԱՒԱԿ ԾՆՈՂԱՑՆ ՁԱՂԱՐԻՆ ԵՒ ԲԱԲԱԽԱԹՈՒՆԻՆ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎԻՆ՝ :ՁՀԵ:

Անունը կարող է նաև ՄԱՆՈՒԿ ՆԱԼՆ կարդացվել։ Գերեզմանաքարը եռաստիճան հիմքի վրա սրանկյուն օրորոցաձև է. վերին մասերը զարդարված քանդակներով. աջ կողմի ստողերը ճակատին են դրված. կենտրոնի բաց մասում հեծյալ որսորդ, որի առաջից փախչում է այծ կամ եղջերու։

Լալայան, Գ., 168.

240. ՑԱՑՋԻ. ՔՑՈՒՐԴԼԱՐ ԳՑՈՒՂԱՏԵՂԻ եկեղեցու գավթի մուաքի մոտի խաչքարի վրա.

:ՆԼԲ: թվ. յանուն Այ ու արքաուն Սմպատայ
ու Տարսաիենին իշխանութեամբ... վերապատրոնութեամբ
ես կուոլ? միաբանեցայ:
Հիշեա ՔՍ. Ա՛Ծ. զՄամիկոյ թագոնի՛ և ողորմեա:

Անձամբ ստուգելու հնարավորություն չենք ունեցել, դնում ենք ըստ Լալայանի։
Բացահայտ է թվականի սխալը. Սմբատ արքան և Տարսայիճը հայանի Օրբելյան եղբայրներն են, 13-րդ դարի գործիչներ։

Լալայան, Գ., 168.